

«ՎՏԲ-Սոցիալական»

Կուտակային - ծախսային ավանդ ՉՉ կենսաթոշակառուների համար, ամսական կամ ժամկետի ավարտին տոկոսագումարների վճարմամբ

1. Ավանդի համար սահմանվում են հետևյալ ժամկետները և տարեկան տոկոսադրույքները.

Ավանդի նվազագույն գումար/ ժամկետ	Տոկոսների վճարման հաճախականություն	61-365 օր
ՉՉ դրամ	Յուրաքանչյուր ամիս	11.00%
10 000 -ից	ժամկետի ավարտին	12.00%

2. Ավանդը ընդունվում է ՉՉ ռեզիդենտ կենսաթոշակառու անձից:
3. Ավանդը չի կարող ներդրվել հօգուտ երրորդ անձի:
4. Ավանդը անսահմանափակ անգամներ լրացուցիչ մուծումներով և ելքագրումներով է:
5. Ավանդը ներդրվում է ՉՉ դրամով:
6. Ավանդի ժամկետը ինքնուրույնաբար որոշում է Ավանդատուն՝ 61 օրից մինչև 365 օր:
7. Ավանդի ներդրման սկզբնական նվազագույն գումարը՝ 10 000 ՉՉ դրամ:
8. Ավանդի դիմաց տոկոսները վճարվում են յուրաքանչյուր ամիս, փոխանցվելով Բանկում բացված քարտային կամ այլ հաշվի, կամ ժամկետի ավարտին:
9. Ավանդին լրացուցիչ վերջին մուծումը կարող է կատարվել մինչև Ավանդի մարման ժամկետից 30 օրացուցային օր առաջ:
10. Ավանդից լրացուցիչ ելքագրումներ կարող են կատարվել առավելագույնը օրական մեկ անգամ՝ սկսած ավանդի ներդրման հաջորդ օրվանից մինչև ավանդի մարմանը նախորդող օրը, ընդ որում Ավանդի գործողության ողջ ընթացքում չնվազող մնացորդ է սահմանվում օրվա դրությամբ ավանդի գումարի կեսը:
11. 180 օր ժամկետից ավել ժամկետով ավանդների համար, եթե ավանդի ներդրման պահին հաճախորդը հայտարարում է, որ հնարավոր է պահանջի ավանդային պայմանագրի վաղաժամկետ դադարեցում (բայց ոչ շուտ, քան ներդրման օրվանից 90 օր անց), Բանկն ի սկզբանե կնքում է ավանդային պայմանագիր՝ գործող տոկոսադրույքից 1% ցածր տոկոսադրույքով: Հետագայում ավանդային պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում տոկոսագումարի վճարումը կատարում է 90-րդ օրվա համար սահմանված տարեկան տոկոսադրույքով:
12. Ավանդի առավելագույն չափը սահմանվում է մինչև 10.0 մլն ՉՉ դրամ: 10.0 մլն ՉՉ դրամից ավելի գումարի ավանդները ներգրավվում են պայմանագրային հիմունքներով:
13. Ավանդի գործողության ընթացքում Բանկը Ավանդատուին կարող է տրամադրել VISA Int. վճարային համակարգի պլաստիկ քարտ հետևյալ սակագնային պայմաններով՝
 - բանկային քարտի թողարկում՝ 0 ՉՉ դրամ,
 - քարտի սպասարկման տարեկան վճար քարտի գործողության առաջին տարում՝ 0 ՉՉ դրամ,
 - քարտային հաշվի չնվազող մնացորդ՝ 0 ՉՉ դրամ,
 - քարտի սպասարկման բոլոր այլ սակագները՝ համաձայն Բանկում գործող սակագների:
 Քարտի տեսակը որոշվում է Ավանդի գումարից կախված:
14. Ավանդը (տոկոսային եկամտի հետ միասին) վերադարձվում է պայմանագրով սահմանված՝ ավանդի ժամկետի վերջին օրը, գումարը փոխանցվելով Բանկում Ավանդատուի անունով բացված քարտային կամ այլ բանկային հաշվի:
15. Ավանդը կարող է վերադարձվել ժամկետից շուտ: Ավանդատուի կողմից Ավանդը ժամկետից շուտ պահանջի դեպքում, Բանկը կատարում է տոկոսների վերահաշվարկ՝ տվյալ պահին Բանկում բանկային հաշվի համար սահմանված տարեկան տոկոսադրույքով, փաստացի վճարված տոկոսագումարների հաշվանցը կատարելով ավանդի գումարից, եթե այդպիսիք եղել են:
16. Ավանդի ձևակերպումը իրականացվում է.
 - 16.1 Կենսաթոշակառու - Բանկի հաճախորդների համար.

Հաճախորդը Բանկ է ներկայացնում անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը /Կենսաթոշակառուի գրքուկը չի պահանջվում, քանի որ հաճախորդի բանկային հաշվի համարը բնորոշում է նրա կենսաթոշակառու լինելը/:

16.1.1 Հաշվին մուտքագրումներ կատարելու համար.

- Հաճախորդը ստորագրում է Դիմում՝ իր բանկային հաշվից ավանդային հաշվին պարբերական մուտքագրումների վերաբերյալ,
- Հնարավորություն է ստանում առանց Բանկ ներկայանալու կատարել պարբերական մուտքագրումներ ավանդային հաշվին,
- Դիմումի ձևը արտահանվում է բանկային ծրագրից ավտոմատ՝ նախորդք լրացված համապատասխան տվյալներով և տրամադրվում է հաճախորդին ստորագրման:

16.2 Կենսաթոշակառու - ոչ Բանկի հաճախորդ.

Ավանդի ձևակերպումը կատարվում է Բանկում գործող «Ֆիզիկական անձանց ավանդային հաշիվների բացման և դրանցով գործառնությունների իրականացման» կարգի համաձայն:

Հաճախորդը Բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը,
- սոցիալական քարտ /բացակայության դեպքում համապատասխան՝ փաստաթուղթ սոց.քարտի բացակայության մասին/,
- Կեսաթոշակառուի գրքույկ, քանի որ ավանդը նախատեսված է ՀՀ կենսաթոշակառուների համար:
16.2.1 Հաշվին մուտքագրումներ կատարելու համար՝ 15.1.1 կետի դրույթների համապատասխան:

17. Ավանդը կարող է ներդրվել նաև Ավանդատուի լիազոր ներկայացուցչի կողմից, Բանկի հետ ավանդի ներգրավման պայմանագիր կնքելու և ավանդի գումարը մուծելու մասին նոտարի կողմից վավերացված լիազորագրի և լիազոր ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի ներկայացմամբ:

18. «ՎՏԲ-Սոցիալական» ժամկետային ավանդը ապահովագրված է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափերով: